

Սույն փաստաթուղթը միայն տեղեկատվական գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում:

►B **Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող Հանձնաժողովի 1994 թվականի հունվարի 21-ի 94/2/ԵՀ հրահանգ**

Կենցաղային էլեկտրական սառնարանների, սառցարանների և դրանց համակցումը հանդիսացող սարքերի էներգապիտակավորման մասին

(ՊՏ L 045, 17.2.1994թ., էջ 1)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

		Թիվ	էջ	ամսաթիվ
►M1	Հանձնաժողովի 2003թ. հուլիսի 3-ի 2003/66/ԵՀ L 170 հրահանգով		10	9.7.2003
▼M2	Հանձնաժողովի 2006 թվականի հոկտեմբերի 23-ի 2006/80/ԵՀ հրահանգով		67	20.12.2006

Փոփոխված՝

A1	Չեխիայի Հանրապետության, Էստոնիայի Հանրապետության, Կիպրոսի Հանրապետության, Լատվիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Հունգարիայի Հանրապետության, Մալթայի Հանրապետության, Լեհաստանի Հանրապետության, Սլովենիայի Հանրապետության և Սլովակիայի Հանրապետության անդամակցության պայմանների և Եվրոպական միության	L 236	33	23.9.2003
----	---	-------	----	-----------

հիմնադիր պայմանագրերում
փոփոխությունների վերաբերյալ ակտով

▼B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Կենցաղային սարքավորումների կողմից սպառվող էներգիայի և այլ ռեսուրսների վերաբերյալ՝ պիտակավորման և արտադրանքի մասին ստանդարտ տեղեկատվության վերաբերյալ» Խորհրդի 1992 թվականի սեպտեմբերի 22-ի 92/75/ԵՏՀ հրահանգը, (1) մասնավորապես դրա 9 և 12-րդ հոդվածները,

քանի որ 92/75/ԵՏՀ հրահանգի համաձայն Հանձնաժողովը պետք է կիրարկող հրահանգ ընդունի կենցաղային սարքավորումների, ներառյալ սառնարանների, սառցարանների և դրանց համակցումը հանդիսացող սարքերի վերաբերյալ,

քանի որ սառնարանների և սառցարանների կողմից էլեկտրականության օգտագործումը կազմում է Համայնքի ամբողջ էլեկտրականության պահանջարկի նշանակալից մասը, և քանի որ դրանց կողմից սպառվող էներգիայի ծավալները կարող են էապես կրճատվել,

քանի որ ՍԵԿ-ի (Ստանդարտացման եվրոպական կոմիտե) EN 153 չափորոշիչը հանդիսանում է մեթոդ սառնարանների, սառցարանների և դրանց համակցումը հանդիսացող սարքերի կողմից էներգիայի սպառումը չափելու համար,

քանի որ Համայնքը, հաստատելով իր հետաքրքրությունը ստանդարտացման միջազգային համակարգի նկատմամբ, որը կարող է ստանդարտներ մշակել, որոնք փաստացի օգտագործվում են միջազգային առևտրի բոլոր գործընկերների կողմից և բավարարում են Համայնքի քաղաքականության պահանջները, հորդորում է Եվրոպական ստանդարտներ մշակող կազմակերպություններին շարունակել իրենց համագործակցությունը միջազգային ստանդարտներ մշակող կազմակերպությունների հետ,

քանի որ Ստանդարտացման եվրոպական կոմիտեն (ՍԵԿ) և էլեկտրատեխնիկական ստանդարտացման եվրոպական կոմիտեն (ՍԵՆԷԼԵԿ) կառույցներ են, որոնք իրավասու են

ներդաշնակեցված ստանդարտներ ընդունել Հանձնաժողովի և այս երկու կառույցների միջև 1984 թվականի նոյեմբերի 13-ին ստորագրված համագործակցության ընդհանուր ուղեցույցի համաձայն, քանի որ սույն Հրահանգի համաձայն ներդաշնակեցված ստանդարտը տեխնիկական մասնագիր է/բնութագիր է (Եվրոպական ստանդարտների կամ ներդաշնակեցման փաստաթուղթ), որն ընդունված է ՍԵԿ-ի կամ ՍԵՆԵԼԷԿԻ կողմից Հանձնաժողովի պարտականությունների շրջանակի (մանդատի) հիման վրա՝ Խորհրդի 1983 թվականի մարտի 28-ի 83/189/ԵՏՀ հրահանգի համաձայն, որն ընթացակարգ է սահմանում տեխնիկական ստանդարտների և կանոնակարգերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մասին և այս ընդհանուր ուղեցույցի հիման վրա, քանի որ սույն Հրահանգով նախատեսված միջոցառումները համապատասխանում են 92/75/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածի համաձայն ստեղծված Կոմիտեի եզրակացությանը:

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

1. Սույն Հրահանգը տարածվում է էլեկտրական ցանցից սնվող կենցաղային սառնարանների, սառեցված սննդամթերքի պահպանման խցիկների, սննդամթերքի սառցարանների և դրանց տարբեր համակցումների վրա: Հրահանգը չի տարածվում այն սարքերի վրա, որոնք կարող են սնվել նաև էներգիայի այլ աղբյուրներից, ինչպես օրինակ՝ մարտկոցներից:

▼M1

2. Սույն Հրահանգով պահանջվող տեղեկատվությունը ձեռք է բերվում Եվրոպական ստանդարտներ մշակող մարմինների (ՍԵԿ, ՍԵՆԷԼԵԿ, ԵՀՍԻ) կողմից Հանձնաժողովի պարտականությունների շրջանակում՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 98/34/ԵՀ հրահանգի համաձայն, որոնց հղման համարները հրապարակվել են Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում և որոնց համար անդամ պետությունները հրապարակել են ներդաշնակեցված ստանդարտները փոխատեղող ազգային ստանդարտների հղման համարները:

3. I, II և III Հավելվածների դրույթները, որոնք պահանջում են աղմուկի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, կիրառվում են միայն այն դեպքում, երբ այդ տեղեկատվությունը պահանջվում է անդամ պետությունների կողմից Խորհրդի թիվ

86/594/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածի համաձայն: Այս տեղեկատվությունը պետք է գնահատվի այդ հրահանգի համաձայն:

4. Սույն Հրահանգում օգտագործվում են 92/75/ԵՏՀ հրահանգի 1(4) հոդվածում նշված հասկացությունները:

▼B

Հոդված 2

1. 92/75/ԵՏՀ հրահանգի 2(3) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը ներառում են՝

- մատակարարի անվանումը և հասցեն,
- սարքավորման ընդհանուր նկարագրությունը, որը բավարար է այն տարբերակելու համար,
- տեղեկատվական նյութեր, այդ թվում՝ սխեմաներ (ըստ անհրաժեշտության), մոդելի նախագծման հիմնական հատկանիշների և մասնավորապես այն հատվածների վերաբերյալ, որոնք առավել մեծ ազդեցություն ունեն էներգասպառման վրա,
- սույն Հրահանգի 1(2) հոդվածում նշված ստանդարտների համաձայն իրականացված չափումների մասին տեղեկանքներ,
- շահագործման ցուցումներ, եթե այդպիսիք կան:

▼M1

Երբ որոշակի կազմաձևով մոդելի մասին տեղեկատվությունն ստացվել է նախագծային տվյալներով կատարված հաշվարկների հիման վրա և (կամ) դուրս են բերվել նման կազմաձև ունեցող այլ մոդելների տվյալներից, փաստաթուղթը պետք է ներառի այդ հաշվարկի և (կամ) դուրսբերման մանրամասները, ինչպես նաև դրանց ճշգրտության ստուգման համար իրականացված թեստերի նկարագրությունը (շահագործումը հաշվարկող մաթեմատիկական մոդելի մանրամասները և չափումները, որոնք իրականացվել են այդ մոդելն ստուգելու համար):

▼B

2. Սույն Հրահանգի կարգավորման դաշտի մեջ մտնող սարքերը դասակարգվում են IV հավելվածով սահմանված խմբերի:

3. 92/75/ԵՏՀ հրահանգի 2(1) հոդվածում նշված պիտակը պետք է համապատասխանի սույն Հրահանգի I հավելվածում նշված նկարագրությանը: Պիտակը պետք է փակցվի դրսից կամ սարքի վերևի կամ դիմային մասում, այնպես, որ հստակորեն երևա ու ոչ մի բանով չծածկվի:

4. 92/75/ԵՏՀ հրահանգի 2(1) հոդվածում նշված տեղեկաթերթիկը, իր բովանդակությամբ ու ձևաչափով, պետք է համապատասխանի սույն Հրահանգի II հավելվածում նշված նկարագրությանը:

▼M1

5. Երբ սարքավորումներ են առաջարկվում վաճառքի, վարձակալության կամ տարածամկետ վաճառքի համար տպագրված կամ գրավոր նյութերի միջոցով կամ այլ միջոցներով, ինչպես գրավոր առաջարկը, էլ. փոստով պատվերների կատալոգը, ինտերնետով կամ էլեկտրոնային լրատվամիջոցներով գովազդը, որոնք ենթադրում են, որ հնարավոր հաճախորդը չի կարող տեսնել սարքավորումը ցուցադրված, այդ նյութերը պետք է պարունակեն III հավելվածում նշված տեղեկատվությունը:

▼B

6. Սարքի էներգախնայողության դասը պետք է որոշվի IV հավելվածի համաձայն:

Հոդված 3

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու, որ իրենց տարածքում գործող բոլոր մատակարարներն ու միջնորդներն իրականացնեն սույն Հրահանգով սահմանված իրենց պարտականությունները:

Հոդված 4

1. Անդամ պետությունները պետք է ընդունեն և հրապարակեն սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ իրավական ակտերը մինչև 1994 թվականի դեկտեմբերի 31-ը: Նրանք պետք է այդ մասին անմիջապես տեղեկացնեն Հանձնաժողովին: Նրանք պետք է կիրառեն այդ դրույթները 1995 թվականի հունվարի 1-ից:

Անդամ պետությունները, սույն ակտերն ընդունելիս, պետք է ապահովեն, որ դրանք հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով իրենց պաշտոնական

հրապարակման պահին: Նման հղում կատարելու կարգն ընդունվում է անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին ներկայացնում են ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 5

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց 20 օր հետո:

Հոդված 6

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՊԻՏԱԿԸ

Պիտակի ձևը

1. Պիտակը պետք է համապատասխանի հետևյալ նկարագրությանը՝

ՆԿԱՐՆԵՐ

Պիտակի վերաբերյալ ծանոթագրություն

2. Հետևյալ ծանոթագրություններով սահմանվում են պիտակի մեջ ընդգրկվելու ենթակա տեղեկատվությունը:

Ծանոթագրություն

I. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը

II. Մատակարարի մոդելի անվանումը կամ համարը

III. Սարքավորման էներգախնայողության դասը սահմանվում է V Հավելվածի համաձայն: Համապատասխան տառը նշվում է սլաքի համապատասխան մակարդակի վրա:

IV. Չհակասելով Համայնքի «Էկոպիտակի տրամադրման կարգի» պահանջներին, այստեղ կարող է ավելացվել էկոպիտակի (ծաղիկը) պատճենը, եթե սարքավորմանը շնորհվել է «Համայնքի էկոպիտակ»՝ Խորհրդի թիվ 880/92/ԵՏՀ կանոնակարգի համաձայն (5): Ստորև նշված «Լվացքի մեքենաների պիտակների նախագծման ուղեցույցում» բացատրվում է, թե ինչպես կարելի է պիտակի մեջ ընդգրկել էկոպիտակի նշանը:

V. 1 (2) հոդվածում նշված ստանդարտների համաձայն որոշված էներգասպառումը՝ արտահայտված կՎտժ-ով տարեկան կտրվածքով (այսինքն՝ 24 ժամ×365):

VI. Այն սառեցման խցիկների գումարային ծավալը, որոնք չեն համապատասխանում «աստղի» վարկանիշին (այն է՝ աշխատանքային ջերմաստիճանը բարձր է - 6 °C): VII. Սառեցված սննդամթերքի պահման այն խցիկների գումարային ծավալը, որոնք համապատասխանում են «աստղի» վարկանիշին (այն է՝ աշխատանքային

ջերմաստիճանը փոքր կամ հավասար է - 6 °C):

VIII. Ստեղծված սննդամթերքի պահպանման խցիկի «աստղային» վարկանիշի գնահատումը՝ 1 (2) հոդվածում նշված ստանդարտների համաձայն: Եթե խցիկը չունի որևէ վարկանշային աստղ, այս մասը բաց է մնում:

IX. Աղմուկի մակարդակը, որը չափվում է 86/594/ԵՏՀ հրահանգի համաձայն, եթե դրա կարիքը կա:

▼M1 _____

▼B

Տպագրություն

3. Հետևյալ նկարագրությունը սահմանում է պիտակի որոշ առանձնահատկություններ՝

ՆԿԱՐ

«A+» և «A++» դասի սարքերի նույնականացման տառը պետք է համապատասխանի հետևյալ նկարներին և գրվի նույն տեղում ինչ «A» նույնականացնող տառը «A» դասի սարքերի համար:

ՆԿԱՐ

Օգտագործվող գույները.

CMYK: երկնագույն, ծիրանագույն, դեղին, սև:

օրինակ 07X0՝ Օր.՝ 0 % երկնագույն, 70 % ծիրանագույն, 100 % դեղին, 0 % սև:

Սլաքներ.

Ա՝ X070

Բ. 70X0՝

Գ) 30X0

Դ՝ 00X0

Ե՝ 03X0

Զ՝ 07X0

Է՝ 0XX0

Եզրագծի գույնը X070

Ամբողջ տեքստը սև է: Ֆոնը սպիտակ է:

▼M1 _____

▼B

Տեղեկաթերթիկը

Տեղեկաթերթիկում նշվում են հետևյալ տեղեկությունները: Տեղեկությունները կարող են ներկայացվել մատակարարի կողմից առաջարկվող մի շարք մոդելները նկարագրող աղյուսակի տեսքով, որի դեպքում տվյալները պետք է ներկայացվեն հետևյալ հերթականությամբ կամ սարքի նկարագրին կից:

1. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը:
2. Մատակարարի մոդելի համարը:
3. Սարքավորման տեսակը (հետևյալ ձևաչափով).

Խումբը	Տեղեկաթերթիկում նկարագրությունը
1	Մթերապահոցային սառցարան
2	Սառնարան
3	Սառնարան
4	Սառնարան
5	Սառնարան
6	Սառնարան
7	Սառնարան/սառցարան
8	ուղղաձիգ կանգնած սառցարան
9	Վերևից բացվող սառցարան
	10-րդ խմբի սարքավորումների դեպքում մատակարարը կարող է ընտրել սարքավորման տեսակի նկարագրությունը:

4. V հավելվածի համաձայն սահմանված մոդելի էներգախնայողության դասը՝ արտահայտված «էներգախնայողության դաս...«A++»-ից (ամենաարդյունավետ) մինչև «G» (ամենաքիչ արդյունավետ) ձևաչափով»: Երբ այս տեղեկատվությունը տրամադրվում է աղյուսակում, այն կարող է ներկայացվել այլ կերպ՝ պայմանով, որ պարզ է, որ սանդղակը «A++»-ից (առավել արդյունավետ) «G»-ն (ամենաքիչ անարդյունավետ) է: ▼B

5. Եթե տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակով, և եթե թիվ 880/92 Կանոնակարգի համաձայն աղյուսակում թվարկված որոշ սարքերին շնորհվել է "Համայնքի էկո-պիտակ", այս տեղեկությունները կարող են ներառվել այստեղ: Այս դեպքում, վերնագրի տողում նշվում է «Համայնքի էկո-պիտակի շնորհում» և տեղադրվում է էկոպիտակի նշանի պատճենը (ծաղիկը): Այս դրույթը չի հակասում Համայնքի էկոպիտակավորման շնորհման կարգի պահանջներին:

6.1 (2) հողվածում նշված ստանդարտների համաձայն որոշված էներգասպառումը՝ արտահայտված կՎտԺ-ով տարեկան կտրվածքով (այսինքն՝ 24 Ժամ×365), նկարագրվում է որպես. «Տարեկան XYZ կՎտԺ էներգասպառում՝ 24 Ժ ստանդարտ թեստավորման արդյունքների հիման վրա: Իրական էներգասպառումը կախված կլինի նրանից, թե ինչպես է օգտագործվում սարքավորումը և որտեղ է այն գտնվում»:

7. Թարմ սննդամթերքի պահպանման խցիկի (5 °C) զուտ ծավալը, 1 (2) հողվածում նշված ստանդարտների համաձայն՝ բացառությամբ 8 և 9 դասերը:

▼M1

8. Սառեցված սննդի պահպանման խցիկի (ինչպես նաև սառեցնող բաժնի, եթե այդպիսին կա) զուտ ծավալը, 1(2) հողվածում նշված ստանդարտների համաձայն, բացառությամբ 1, 2 և 3 դասերի: 3-րդ դասի սարքավորումների դեպքում՝ «սառցատուփի» զուտ ծավալը:

▼B

7 և 8. 2 և 10 դասերի համար, յուրաքանչյուր խցիկի զուտ ծավալը պետք է ներկայացվի 1 (2) հողվածում նշված ստանդարտների համաձայն:

9. Սառեցված սննդամթերքի պահպանման խցիկի (եթե այդպիսին կա) վարկանիշը աստղերով, 1 (2) հողվածում նշված ստանդարտների համաձայն:

10 «No frost» (առանց սառույցի) հիշատակումը կարող է ներառվել այստեղ, 1 (2) հողվածի ստանդարտների սահմանումների համաձայն:

11. «Հզորության կրճատում անվտանգություն Ֆ ժ.», որը սահմանվում է որպես «ջերմաստիճանի բարձրացման ժամանակահատված»՝ 1 (2) հոդվածի ստանդարտների համաձայն:

12 «Սառեցման ունակություն» արտահայտված կգ/24 ժ-ով՝ 1 (2) հոդվածի ստանդարտների համաձայն:

13. «Կլիմայի դաս»՝ 1 (2) հոդվածի ստանդարտների համաձայն: Երբ սարքավորումը պատկանում է «չափավոր» կլիմայի դասին, սա կարող է չներառվել:

14. «Աղմուկը», որը անհրաժեշտության դեպքում չափվում է 86/594/ԵՏՀ հրահանգի համաձայն:

▼M1

15. Եթե մոդելն արտադրվում է որպես ներկառուցման համար նախատեսված սարք, դա պետք է նշվի առանձին:

▼B

Երբ սարքը, բացի թարմ սննդամթերքի 1 խցիկից և սառեցված սննդամթերքի 1 խցիկից, ունի նաև այլ խցիկներ, 7, 8, 9, 10, 11, 12 և 13 կետերում կարող են ավելացվել այդ խցիկների մասին տեղեկություններ ներկայացնող լրացուցիչ տողեր: Այս դեպքում խցիկների անվանումները և հերթականությունը ցանկում պետք է համատեղելի լինեն: Եթե խցիկի նախագծային ջերմաստիճանը չի համապատասխանում աստղերով վարկանիշի գնահատման համակարգին կամ թարմ սննդամթերքի խցիկի ստանդարտ ջերմաստիճանին (5 °C), նախագծային ջերմաստիճանը պետք է առանձին նշվի:

Պիտակի բովանդակությունը կարող է ներկայացվել պիտակի գունավոր կամ սևուսպիտակ պատճենի տեսքով: Այս դեպքում միայն տեղեկագրում նշված լրացուցիչ տեղեկությունը պետք է ընդգրկվի:

▼M1 _____

▼B

ՀԱՎԵԼՎԱԾ III

ԷԼ. ՓՈՍՏՈՎ ՊԱՏՎԵՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ՎԱՃԱՌՔ

Փոստային պատվերների կատալոգները և սույն Հրահանգի 2(5) հոդվածում նշված այլ տպագիր նյութերը պետք է պարունակեն հետևյալ տեղեկատվությունը՝ նշված հերթականությամբ.

1. Էներգաարդյունավետության դասը (II հավելված, 4-րդ կետ)
2. Էներգասպառումը (II հավելված, 6-րդ կետ)
3. Թարմ սննդամթերքի խցիկի զուտ ծավալը (II հավելված, 7-րդ կետ)
4. Սառեցված սննդի խցիկի զուտ ծավալը (II հավելված, 8-րդ կետ)
5. Վարկանիշը՝ արտահայտված աստղերով (II հավելված, 9-րդ կետ)
6. Աղմուկի մակարդակը (II հավելված, 14-րդ կետ)

Եթե տեղեկաթերթիկում ներկայացվում են այլ տեղեկություններ, դա պետք է արվի II հավելվածում սահմանված ձևով և պետք է ընդգրկվի վերը նշված աղյուսակում ներկայացված հաջորդականությամբ:

Այս տեղեկությունները պետք է տպագրվեն ընթեռնելի տառատեսակով և տառաչափով:

▼M1 _____

▼B

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ԽՄԲԵՐԸ

Սույն Հրահանգի կարգավորման դաշտի մեջ մտնող սարքերը բաժանվում են հետևյալ «խմբերի»՝

1. Կենցաղային սառնարաններ առանց ցածր ջերմաստիճանի խցիկների:
2. Կենցաղային սառնարաններ 5 °C և (կամ) 10 °C ջերմաստիճանի խցիկներով:
3. Կենցաղային սառնարաններ վարկանշային աստղեր չունեցող ցածր ջերմաստիճանի խցիկներով:
4. Կենցաղային սառնարաններ ցածր ջերմաստիճանի խցիկներով*:
5. Կենցաղային սառնարաններ ցածր ջերմաստիճանի խցիկներով**:
6. Կենցաղային սառնարաններ ցածր ջերմաստիճանի խցիկներով***:
7. Կենցաղային սառնարաններ/սառցարաններ ցածր ջերմաստիճանի խցիկներով*(***):
8. Սննդի կենցաղային սառցարաններ, ուղղաձիգ:
9. Սննդի կենցաղային սառցարաններ, վերևից բացվող:
10. Կենցաղային սառնարաններ և սառցարաններ ավելի քան 2 դռնով կամ այլ սարքավորումներ, որոնք վերևում չեն նշվում:

ՀԱՎԵԼՎԱԾ V

ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ

▼M1

ՄԱՍ 1. «A+» և «A++» դասերի սահմանումները

Սարքը դասակարգվում է որպես «A+» կամ «A++», եթե էներգաարդյունավետության ինդեքսը՝ ալֆան (I_α), գտնվում է աղյուսակում 1-ում նշված սահմաններում:

Աղյուսակ 1

Էներգաարդյունավետության ինդեքսը I_α	«Էներգաարդյունավետության դասը»
$30 > I_\alpha$	A++
$42 > I_\alpha \geq 30$	A+
$I_\alpha \geq 42$	A-ից G (տես ստորև)

Աղյուսակ 1-ում

$$I_\alpha = \frac{AC}{SC_\alpha} \times 100$$

որտեղ՝

AC = սարքի տարեկան էներգասպառումը (I Հավելվածի համաձայն, V ծանոթագրություն)

SC $_\alpha$ = սարքի ստանդարտ տարեկան էներգասպառումը՝ α

SC $_\alpha$ հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M_\alpha X_{Compartments} \left(Vc \times (25 - Tc) \frac{25 - Tc}{20} \times FF \times CC \times BI \right) + N_\alpha + CH$$

որտեղ՝

Vc-ն խցիկի զուտ ծավալն է (լիտրով)՝ 1 (2) հողվածում նշված ստանդարտների համաձայն:

Տc-ն խցիկի նախագծային ջերմաստիճանն է (°C-ով):

Mα և Nα արժեքները բերվում են 2-րդ աղյուսակում, իսկ FF, CC, BI և CH արժեքները բերվում են 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

Սարքի տեսակը	Ամենացածր ջերմաստիճանը	Mα	Nα
1 միախցիկ սառնարան	> - 6 °C	0,233	245
2 Սառնարան/սառցարան	> - 6 °C	0,233	245
3 Սառնարան առանց աստղի	> - 6 °C	0,233	245
4 Սառնարան*	≤ - 6 °C *	0,64 3	191
5 Սառնարան**	≤ - 12 °C **	0,45 0	245
6 Սառնարան***/	≤ - 18 °C ***/* (***)	0,777	303
7 Սառնարան-սառցարան *(***)	≤ - 18 °C ***/* (***)	0,777	303
8 Ուղղաձիգ սառցարան	≤ - 18 °C *(***)	0,53 9	315
9 Վերևից բացվող սառցարան	≤ - 18 °C *(***)	0,472	286
10 Բազմադուռ կամ այլ տեսակի սառնարան		(1)	(1)

(1) Այս սարքերի դեպքում, M և N արժեքները որոշվում են ամենասառը խցիկի ջերմաստիճանով կամ «աստղային» վարկանիշով: - 18 °C *(***) խցիկներով սարքերը համարվում են սառնարան-սառցարան *(***):

Աղյուսակ 3

Ճշտման գործակից	Արժեքը	Պայման
FF (առանց սառցի)	1,2	Սառեցված սննդամթերքի (օդափոխվող) պահման խցիկներ
	1	Այլ կերպ
CC (կլիմայի դաս)	1,2	«արևադարձային» սարքերի համար
	1,1	«մերձարևադարձային» սարքերի համար
	1	Այլ կերպ
BI (ներկառուցված)	1,2	58 սմ լայնությամբ ներկառուցված սարքերի համար
	1	Այլ կերպ
CH (սառեցնող խցիկ)	50 Kwh/y	Առնվազն 15 լիտր ծավալով սառեցնող խցիկներով սարքեր
	0	Այլ կերպ
<p>(1) Սարքը «ներկառուցված» է համարվում միայն այն դեպքում, երբ այն նախագծվում է բացառապես խոհանոցային կահույում տեղակայվելու համար, չունի սեփական արտաքին ձևավորում և թեստավորվում է որպես այդպիսին:</p>		

Եթե սարքը «A+» կամ «A++» չէ, այն դասակարգվում է 2-րդ մասի համաձայն:

ՄԱՍ 2. «A» –ից «G» դասերի սահմանումները

▼B

Սարքի էներգախնայողության դասը որոշվում է ստորև բերված աղյուսակ 1-ի համաձայն:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Էներգաարդյունավետության ինդեքս I	Էներգաարդյունավետության դաս
$I < 55$	Ա
$55 \leq I < 75$	Բ
$75 \leq I < 90$	Գ
$90 \leq I < 100$	Դ
$100 \leq I < 110$	Ե
$110 \leq I < 125$	Զ
$125 \leq I$	Է

Որտեղ՝

«Էներգաարդյունավետության ինդեքսը» (արտահայտված տոկոսով) = սարքի տարեկան էներգասպառում (6) / սարքի ստանդարտ տարեկան էներգասպառում

«սարքի ստանդարտ տարեկան էներգասպառում» (կՎտժ/տարի-ով) = $M \times$ ճշտված զուտ ծավալ + N

և

ճշտված զուտ ծավալը (լիտրով) = թարմ սննդի խցիկի զուտ ծավալ + $\Omega \times$ սառեցված սննդի խցիկի զուտ ծավալ:

M, N և Ω -ի արժեքները վերցվում են 2-րդ աղյուսակից:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Սարքավորման դասը	Ω	M	N
1 Միախցիկ սառնարան	—	0,233	245
2 Սառնարան/սառցարան	0,75 (1)	0,233	245

3 սառնարան առանց աստղի	1,25	0,233	245
4 սառնարան *	1,55	0,643	191
5 սառնարան **	1,85	0,450	245
6 սառնարան ***	2,15	0,657	235
7 սառնարան/սառցարան*(***)	(3)	0,777	303
8 Ուղղաձիգ սառցարան	2,15 (2)	0,472	286
9 Վերկից բացվող սառցարան	2,15 (2)	0,446	181
10 Բազմադուռ կամ այլ սառնարան	(3)	(4)	(4)

(1) «սառնարան/սառցարան»-ների դեպքում ճշտված ծավալը = թարմ սննդամթերքի խցիկի զուտ ծավալ + $\Omega \times$ սառնարանի խցիկի (10 °C) զուտ ծավալ (լիտրով):

(2) II հավելվածի 10-րդ կետով սահմանված «չսառցակալվող» սարքերի դեպքում, այս ինդեքսը բազմապատկվում է 1,2 պայմանական գործակցով՝ հասցնելով 2,58 արժեքի: (Սա թույլ է տալիս խուսափել չափման մեթոդի հնարավոր շեղումներից, քանի որ այն հաշվի չի առնում սառույցի բացակայությունը չսառցակալվող սառնարաններում: Գործնականում, սառցակալումը որոշ չափով ավելացնում է «ավանդական» սառնարանների էներգասպառումը:)

(3) Ճշտված զուտ ծավալը՝ AV-ն, հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $AV = 25-TC20 \times VC \times FC$

բոլոր խցիկները

Որտեղ TC-ն յուրաքանչյուր խցիկի նախագծային ջերմաստիճանն է (°C-ով), VC-ն յուրաքանչյուր խցիկի զուտ ծավալն է (լիտրով) և FC-ն այն գործակից է, որը հավասար է 1,2-ի «չսառցակալվող» խցիկների դեպքում և 1-ի՝ այլ խցիկների դեպքում:

(4) Այս սարքերի համար M և N արժեքները որոշվում են ամենասառը խցիկի ջերմաստիճանով կամ «աստղային» վարկանիշով, ինչպես որ դա նշված է ստորև.

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Ամենասառը ջերմաստիճանը	խցիկի Համարժեք դաս	M	N
> - 6 °C	1/2/3 միախցիկ սառնարան/առանց աստղի սառնարան/սառնարան-պահոց	0,233	245
≤ - 6 °C *	4 սառնարան (*)	0,64 3	191
≤ - 12 °C **	5 սառնարան (**)	0,45 0	245
≤ - 18 °C ***	6 սառնարան (***)	0,65 7	235
≤ - 18 °C *(***) սառեցման կարողությամբ	7 սառնարան/սառցարան*(***)	0,777	303

(1) ՊՏ թիվ L 297, 13.10.1992թ., էջ. 16:

(2) ՊՏ թիվ L 109, 26.1983թ., էջ. 8:

((3) ՊՏ թիվ L 221, 6.8.1992թ., էջ. 55:

(4) ՊՏ L 204, 21.7.1998թ., էջ 37:

((5) ՊՏ թիվ L 99, 11.4.1992թ., էջ. 1:

(I Հավելվածի, V ծանոթագրության համաձայն: